**Արձանագրություն N 5**

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կարիքների համար <<Տնտեսական, սանիտարական և լվացքի միջոցների>> ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» ապրիլի 2016թ.
ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*
**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար.

*հանձնաժողովի անդամներ՝*
**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,
**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,
**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*
**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄՀմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Անահիտ Ավագյանը՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին**

1.1 Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին հրավիրված մասնակիցներից՝ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ, «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ, «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, ոչ մեկը ներկա չի գտնվել բանակցություններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 9-րդ, 15-րդ, 16-րդ և 25-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին.**

2.1 Հաշվի առնելով, որ 9-րդ և 25-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների ներկայացրած գնի առաջարկներում 9-րդ և 25-րդ չափաբաժինների մասով նշված ինքնարժեքներն արդեն իսկ գերազանցել են այդ գնումները

կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, 9-րդ և 25-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ բանակցություններ չեն վարվել,

2.2 15-րդ և 16-րդ չափաբաժինների մսով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված և միաժամանակյա բանակցություններին հրավիրված մասնակիցները չեն ներկայացել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին:

**3. Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց՝**

ա) հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01» ծածկագրով ընթացակարգը 9-րդ, 15-րդ, 16-րդ և 25-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած,

բ) հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 9-րդ, 15-րդ, 16-րդ և 25-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 35-րդ կետի 2-րդ ենթակետի բ. պարբերությունը** ՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**

4.1. 1-ին, 5-րդ, 6-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ -ին.

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԻՍԱ» ՓԲԸ -ին,

5-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով՝ «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, 6-րդ չափաբաժնի մասով՝ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին, 17-րդ** չափաբաժնի մասով ՝ «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ին:

4.2. 2-րդ, 7-րդ, 11-րդ, 22-րդ և 24-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին.

2-րդ** չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին, 7-րդ և 24-րդ չափաբաժինների մասով՝ «ՏԻՍԱ» ՓԲԸ-ին, 11-րդ և 22-րդ չափաբաժինների մասով՝ «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին:

4.3. 3-րդ, 4-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 23-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ -ին.

3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

4-րդ** չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին, 8-րդ, 13-րդ 14-րդ և 23-րդ չափաբաժինների մասով՝ «ՏԻՍԱ» ՓԲԸ-ին, 10-րդ չափաբաժնի մասով՝ «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին, 12-րդ չափաբաժնի մասով՝ «ՄԱԳՆԱՏԷՍ» ՍՊԸ-ին:

4.4. 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԻՍԱ» ՓԲԸ-ին.

20-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին, 21-րդ չափաբաժնի մասով՝ «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Հանձնաժողովի քարտուղարին.**

**5.1** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը:

**5.2** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի ապրիլի 22-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

**5.3** Հաշվի առնելով, որ «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ -ն՝ 1-ին, 6-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով, «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ն՝ 2-րդ, 7-րդ, 22-րդ և 24-րդ չափաբաժինների մասով, «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն՝ 8-րդ, 10-րդ, 13-րդ և 23-րդ չափաբաժինների մասով, «ՏԻՍԱ» ՓԲԸ-ն ՝ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ներկայացրել են չհիմնավորված ցածր գնային առաջարկ (գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից), և ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի ապրիլի 22-ը ներառյալ ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված լրացուցիչ հիմնավորումներ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2015 թվականի ապրիլի 26-ին, ժամը՝ 11:30-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Կարեն Մելքոնյան

Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 9- ՐԴ, 15- ՐԴ, 16- ՐԴ և 25- ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի ապրիլի 18-ի թիվ 5 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

### ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 9-րդ, 15-րդ, 16-րդ և 25-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

| **Չափաբաժին** | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն'"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/ | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 9 | Սպունգ, աման լվանալու | ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ, «ՏԻՍԱ» ՓԲԸ, «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ, «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՄԱԳՆԱՏԷՍ» ՍՊԸ, Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | 9-րդ չափաբաժնի մասով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Քանի որ տվյալ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների ներկայացրած գնի առաջարկներում 9-րդ չափաբաժնի մասով նշված ինքնարժեքներն արդեն իսկ գերազանցում են այդ գնումը կատարելու |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ կոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ չեն վարվել: |
| 15 | Ցախավել | ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ, «ՏԻՍԱ» ՓԲԸ, «ՄԱԿՐՈ ՖՈԻԴ» ՍՊԸ, «ԷԼԻՊՍ ԳՐՈԻՊ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները. սահմանված կարգով կազմակերպված՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներից ոչ ոք ներկա չի գտնվել |
| 16 | Հոտազերծիչ, օդի | ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ, «ՏԻՍԱ» ՓԲԸ, «ՄԱԿՐՈ ՖՈԻԴ» ՍՊԸ, «ԷԼԻՊՍ ԳՐՈԻՊ» ՍՊԸ, «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ, Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները. սահմանված կարգով կազմակերպված՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներից ոչ ոք ներկա չի գտնվել |
| 25 | Սանդուղք, մետաղյա | ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ, «ՏԻՍԱ» ՓԲԸ, «ՄԱԿՐՈ ՖՈԻԴ» ՍՊԸ, «ԷԼԻՊՍ ԳՐՈԻՊ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | 25-րդ չափաբաժնի մասով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Քանի որ տվյալ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և ոչ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների ներկայացրած գնի առաջարկներում 25-րդ չափաբաժնի մասով նշված ինքնարժեքներն արդեն իսկ գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ կոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ չեն վարվել: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «**ՀՀ դատական դեպարտամենտ**» **ՊԿՀ**